

**Հաստատված է**

Հայաստանի Հանրապետության պետական  
կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի  
2019 թվականի մայիսի 31-ի  
նիստում (արձանագրություն N 6):

**ՈՒ Ղ Ե Ց ՈՒ Յ Ց**

**ԵՐԿԿՈՂՄԱՆԻ «ԿՈՒՅՐ» ԳՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ  
(DOUBLE-BLIND PEER REVIEW GUIDELINE)**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն ուղեցույցը սահմանում է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի (այսուհետ՝ Ակադեմիա) «Հանրային կառավարում» գիտական հանդեսում (այսուհետ՝ Հանդես) հրապարակվելիք բնագրերի երկկողմանի «կույր» գրախոսման ընթացակարգը:

2. Սույն ուղեցույցի մշակման հիմքն են Elsevier (հոլանդերեն՝ [ɛlzəviːr]) տեղեկատվական և վերլուծական ընկերության կողմից մշակված մոտեցումները:

3. Ներկայացվող բոլոր հոդվածների բնագրերի կույր գրախոսումն իրականացվում է առնվազն երկու անկախ գրախոսի կողմից:

4. Հանդեսում ընդունված է գրախոսման կազմակերպման երկկողմանի կույր տարբերակը (և՛ գրախոսները, և՛ հեղինակներն անանուն են): Գրախոսի կողմից հեղինակի ինքնության բացահայտումն ուղղակի անհնար է:

5. Բնագիրը պետք է ներկայացվի երկու օրինակով/ֆայլով: Առաջինը պետք է պարունակի տեղեկություն հեղինակ(ներ)ի մասին, իսկ երկրորդ՝ «կուրացված» օրինակը, հեղինակ(ներ)ի մասին որևէ տեղեկություն չպետք է պարունակի:

**2. «ԶԿՈՒՐԱՑՎԱԾ» ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ  
(THE WORLD-LEADING PROVIDER OF SCIENTIFIC, TECHNICAL AND MEDICAL  
INFORMATION PRODUCTS AND SERVICES)**

6. Առաջին օրինակում պետք է նշվեն հեղինակ(ներ)ի անուն(ներ)ը, ազգանուն(ներ)ը, և հայրանվան սկզբնատառը, այն հաստատությունը, որը ներկայացնում են հեղինակները, և թե անհրաժեշտության դեպքում հեղինակներից որի հետ պետք է կապ հաստատել (հեռախոսի համարը և էլեկտրոնային փոստի հասցեն):

7. Կարիք չկա վերացնելու կարևոր ինքնահղումները կամ այլ հղումներ, սակայն ինքնահղումներն անհրաժեշտ է սահմանափակել՝ թողնելով միայն գրախոսման ներկայացված բնագրի նյութին առնչվողները:

### **3. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՒՔ ԿՕԳՆԵՆ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ**

#### **«ԿՈՒՐԱՑՎԱԾ» ԲՆԱԳԻՐԸ**

8. Բնագիրը երկկողմանի «կոյր» գրախոսման ներկայացնելուց առաջ անհրաժեշտ է բնագրի երկրորդ օրինակից հեռացնել հեղինակների տվյալները:

9. Բնագրի երկրորդ օրինակի երկկողմանի «կոյր» գրախոսության պատրաստման համար անհրաժեշտ քայլերն են.

1) եթե տեքստում կան հղումներ հեղինակ(ներ)ի նախկին աշխատանքներին, ապա առաջին դեմքով ներկայացված արտահայտությունները պետք է փոխարինել երրորդ դեմքով: Օրինակ՝ «Ինչպես մենք ցույց ենք տվել նախկինում ... [ազգանունը, 2007 թ.]» արտահայտությունն անհրաժեշտ է փոխարինել «Նախկինում ցույց է տրվել ... [անանուն, 2007 թ.]» արտահայտությամբ, իսկ անգլերեն հղումը՝ [Anonymous, 2007],

2) տեքստում հեղինակ(ներ)ի հրապարակումներին ուղղված հղումները պետք է ներկայացնել հետևյալ կերպ. «... [անանուն, 2007 թ.]» կամ «[Anonymous, 2007]»,

3) գրականության ցանկում հեղինակ(ներ)ի աշխատանքներին արված հղումներում նշվում է միայն «... [անանուն, 2007 թ.]» կամ «[Anonymous, 2007]», մանրամասները բաց են թողնվում,

4) տեքստից հեռացվում են հետազոտությունը ֆինանսավորած աղբյուրների վերաբերյալ հղումները,

5) տեքստում չեն ներառվում շնորհակալական արտահայտություններ,

6) բնագրի էլեկտրոնային տարբերակում չեն նշվում հեղինակ(ներ)ի անուն(ներ)ը:

10. Բնագիրը «կոյր» գրախոսման ներկայացնելուց առաջ անհրաժեշտ է ևս մեկ անգամ ստուգել՝ համոզվելու համար, որ բնագիրը որևէ այլ տեղեկություն չի պարունակում, որը կարող է բացահայտել հեղինակ(ներ)ի ինքնությունը և/կամ նրանց ներկայացրած հաստատությունը: